# Ալեքսանդր Ծատուրյան

## Նորա ալբոմում

Լռիկ նայում եմ չքնաղ պատկերիդ,
Որպես սիրովրդ կախարդված սոխակ,
Նայում եմ պայծառ, սիրուն աչերիդ
Եվ հոգիս կարծես զգում է նոր կյանք:

Կարծես քո զգվող, քաղցր հայացքում
Ժպտում է ինձ մի նոր սիրո գարուն,
Եվ հեգ, ցավատանջ իմ մատաղ կրծքում
Զգում եմ նորից սիրո ջերմություն:

Կարծես իմ առջև տեսնում եմ բացված
Մի նոր երջանիկ ծաղկալից աշխարհ,
Ուր քո սիրովրդ ճակատս պսակված՝
Ապրում, շնչում եմ միայն քեզ համար…

Օ՜, օրհնյալ լինի այն քաղցրիկ րոպեն.
Երբ քեզ բոցավառ պատմեցի իմ սեր,
Եվ վարդ-շրթունքիցդ սիրույս փոխարեն
Ես մի ջերմ համբույր ստացա նվեր…